ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 278-Ա

ՎԱՀԱԳՆ ՀՐԱՉԻԿԻ ԱԹՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> N 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման 2023JMTZYD տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագծերը և Վահագն Հրաչիկի Աթյանի /մուտք՝ 30.06.2025թ. թիվ 431/ դիմումը՝
Որոշում եմ.

1. Հաստատել Թումանյան համյանքի Թումանյան քաղաքի 06-004-0008-0060 կադաստրային ծածկագրից առանձնացված /կադաստրային քարտեզի նախկին 06-004-0008-0041 ծածկագիր/ 0,02761 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հատակագիծը և հողամասի ճշտված սահմանները:
2. Օրինականացնել Թումանյան համայնքի Թումանյան քաղաքում գտնվող, կադաստրային քարտեզի 06-004-0008-0060 ծածկագրից առանձնացված /կադաստրային քարտեզի նախկին 06-004-0008-0041 ծածկագիր/ բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,02761հա մակերեսով հողամասում գտնվող, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված պայմաններին համապատասխանող, 1985 թվականին ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2023JMTZYD ծածկագրով հաշվառված, ընդհանուր 53,9քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության այգետնակը:
3. Ճանաչել Թումանյան համայնքի սեփականության իրավունքը Վահագն Հրաչիկի Աթյանի կողմից ինքնակամ կառուցված և օրինականացված Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0008-0060 ծածկագրից առանձնացված /կադաստրային քարտեզի նախկին 06-004-0008-0041 ծածկագիր/ բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,02761հա մակերեսով հողամասում գտնվող, ընդհանուր 53,9 քմ արտաքին մակերեսով (40,5 քմ ներքին մակերեսով) բնակելի նշանակության այգետնակի նկատմամբ:
4. Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի կադաստրային քարտեզի 06-004-0008-0060 ծածկագրից առանձնացված 0,02761 հա մակերեսով հողամասում կառուցված անշարժ գույքին

տրամադրել նոր փոստային՝ << Լոռու մարզ, Թումանյան համայնք,քաղաք Թումանյան, 3-րդ փողոց, 1-ին նրբանցք, 3/7 այգետնակ>> հասցե:

5. Ինքնակամ կառուցված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության գոտիներում և կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

6. Այգետնակի զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

7. Անշարժ գույքի պետական գրանցում ստանալուց հետո,տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Վահագն Հրաչիկի Աթյանին օրինականացված այգետնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:

8. << Լոռու մարզ, Թումանյան համայնք,քաղաք Թումանյան, 3-րդ փողոց,1-ին նրբանցք, 3/7 այգետնակ հասցեում գտնվող հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի սահմաններով:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 25թ. օգոստոսի 08
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 279-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Թումանյան համայնքի ավագանու 2024թ.նոյեմբերի 22-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին>> թիվ 101-Ն որոշումը,ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով և հիմք ընդունելով Սարիբեկ Սարգսի Մելիքյանի դիմումը `

Որոշում եմ.

1. Լոռու մարզի Թումանյան համայնքի Լորուտ գյուղի կադաստրային քարտեզի 06-045-0037-0002 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ.Լորուտ, 11-րդ փողոց,9 բնակելի տուն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 25թ. օգոստոսի 08
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 280-Ա

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով, հաշվի առնելով,որ հողամասերն ընդգրկված չեն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Շամուտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 26.03.1991թ. թիվ 1 որոշումից տրված քաղվածքը,ժառանգության իրավունքի վկայագիրը,տրված 02.10.2024թ.,գրանցված է սեղանամատյանում 4602,4603, գործ թիվ 303, «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՋՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» ԱՁ-ի կողմից կազմված հողամասերի հատակագծերը և Արման Միսակի Քոչարյանի դիմումը՝
Որոշում եմ.

1. Հաստատել Թումանյան համայնքի Շամուտ գյուղում գտնվող 06-085-0046-0002 կադաստրային ծածկագրով 0,62 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի սահմանները:
1)Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Արման Միսակի Քոչարյանի /ծնված՝ 25.03.1979թ. / սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գ.Շամուտ, 06-085-0046-0002 կադաստրային ծածկագրում գտնվող 0,62 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:
2. Հաստատել Թումանյան համայնքի Շամուտ գյուղում գտնվող 06-085-0134-0004 կադաստրային ծածկագրով 0.6 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասի սահմանները:
1) Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Արման Միսակի Քոչարյանի /ծնված՝ 25.03.1979թ. / սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գ.Շամուտ, 06-085-0134-0004 կադաստրային ծածկագրում գտնվող 0.6 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:
3. Հաստատել Թումանյան համայնքի Շամուտ գյուղում գտնվող 06-085-0131-0007 կադաստրային ծածկագրով 0.41962 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասի սահմանները:
1) Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Արման Միսակի Քոչարյանի /ծնված՝ 25.03.1979թ. / սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գ.Շամուտ, 06-085-0131-0007 կադաստրային ծածկագրում գտնվող 0.41962 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:
4. Հաստատել Թումանյան համայնքի Շամուտ գյուղում գտնվող 06-085-0130-0002 կադաստրային ծածկագրով 0.21888 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասի սահմանները:
1) Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Արման Միսակի Քոչարյանի /ծնված՝ 25.03.1979թ. / սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գ.Շամուտ, 06-085-0130-0002 կադաստրային ծածկագրում գտնվող 0.21888 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:

5. Հողամասերի սահմանները որոշվում են Թումանյան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 25 թ. օգոստոսի 11
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyancity.am@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 281-Ա

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ,8-րդ, 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասի>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով, հաշվի առնելով,որ հողամասերն ընդգրկված չեն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Չկալով գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 30.11.1991թ. թիվ 7 որոշումից տրված քաղվածքը, «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՋՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» ԱՁ-ի կողմից կազմված հողամասերի հատակագծերը և Վարդգես Սերյոժայի Հակոբյանի դիմումը՝
Որոշում եմ.

1. Հաստատել Թումանյան համայնքի Չկալով գյուղում գտնվող 06-089-0026-0015 կադաստրային ծածկագրով 0,12125 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի սահմանները:
1) Օրենքի ուժով ճանաչել Վարդգես Սերյոժայի Հակոբյանի /ծնված՝ 15.08.1954թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գ.Չկալով, 06-089-0026-0015 կադաստրային ծածկագրում գտնվող 0,12 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ,իսկ հատկացվածից ավել զբաղեցրած 0,00125 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Վարդգես Սերյոժայի Հակոբյանի /ծնված՝ 15.08.1954թ./ սեփականության իրավունքը:
2. Հաստատել Թումանյան համայնքի Չկալով գյուղում գտնվող 06-089-0104-0040 կադաստրային ծածկագրով 1.39697 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասի սահմանները:
1) Օրենքի ուժով ճանաչել Վարդգես Սերյոժայի Հակոբյանի /ծնված՝ 15.08.1954թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Չկալով, 06-089-0104-0040 կադաստրային ծածկագրում գտնվող 1.39697 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:
3. Հաստատել Թումանյան համայնքի Չկալով գյուղում գտնվող 06-089-0104-0047 կադաստրային ծածկագրով 0,65654 գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասի սահմանները:
1) Օրենքի ուժով ճանաչել Վարդգես Սերյոժայի Հակոբյանի /ծնված՝ 15.08.1954թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Չկալով, 06-089-0104-0047 կադաստրային ծածկագրում գտնվող 0,65654 հա մակերեսով վարելահողի նկատմամբ:
4. Հաստատել Թումանյան համայնքի Չկալով գյուղում գտնվող 06-089-0104-0066 կադաստրային ծածկագրով 0,23912 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության հողամասի սահմանները:
1) Օրենքի ուժով ճանաչել Վարդգես Սերյոժայի Հակոբյանի /ծնված՝ 15.08.1954թ./ սեփականության

իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Չկալով, 06-089-0104-0066 կադաստրային ծածկագրում գտնվող 0,23912 հա մակերեսով խոտհարքի նկատմամբ:
5. Հաստատել Թումանյան համայնքի Դսեղ գյուղում գտնվող 06-035-0327-0005 կադաստրային ծածկագրով 1,0 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության հողամասի սահմանները:
1) Օրենքի ուժով ճանաչել Վարդգես Սերյոժայի Հակոբյանի /ծնված՝ 15.08.1954թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ, 06-035-0327-0005 կադաստրային ծածկագրում գտնվող 1,0 հա մակերեսով խոտհարքի նկատմամբ:
6. Հաստատել Թումանյան համայնքի Դսեղ գյուղում գտնվող 06-035-0333-0006 կադաստրային ծածկագրով 0,5865 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարք գործառնական նշանակության հողամասի սահմանները:
1)Օրենքի ուժով ճանաչել Վարդգես Սերյոժայի Հակոբյանի /ծնված՝ 15.08.1954թ./ սեփականության իրավունքը Թումանյան համայնք, գյուղ Դսեղ, 06-035-0333-0006 կադաստրային ծածկագրում գտնվող 0,5865 հա մակերեսով խոտհարքի նկատմամբ:
7. 06-089-0026-0015 ծածկագրում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային << ՀՀ, Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Չկալով, 4-րդ փողոց, 10/1 հողամաս>> հասցե:
8. Հողամասերի սահմանները որոշվում են Թումանյան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերով:
9. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեում:
10. Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 10.06.2025թ. N 206-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 25թ. օգոստոսի 12
ք.Թումանյան